ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
9-րդ դասարան (տևողությունը՝180 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:
Այսօրվա քո հաղթանակը նվիրվում է սրբադասված զոհերի՝
Ծիծեռնակաբերդում թևածող հոգիների հիշատակին:
Հաջողությո՛ւն և հաղթանա՛կ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Գիրքը ծալեց. դրեց արկղում ավանդական,
Հետո հավաքեց նամակները ու մի
Դառն հայացքով- երկա՞ր, վերջին անգամ
Դիտեց թղթերը, արկղը, պատերը սենյակի,
Արկղը փակեց, հագավ վերարկուն,
Գլխարկը դրեց կոնատակին- և ելավ դուրս:

Ո՞վ է տրված հատվածի հեղինակը. ո՞ւմ է նվիրված ստեղծագործությունը. գրի՛ր քո կարծիքը այդ ստեղծագործության հերոսի և նրա ստեղծագործության մասին: Ի՞նչ շրջասույթ կա այդ հերոսի մասին;

2.Մեկնաբանի՛ր հետևյալ փոխաբերությունը՝

Թող որոտան իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ…
Ծարունակի՛ր՝ նշելով հեղինակին, բանաստեղծության տեսակը և հեղինակին բնութագրող շրջասույթը:

3.Ո՞ր գետն է հայ ժողովրդի պատմության խորհրդանիշը: Ո՞ր բանաստեղծն է զրուցել այդ գետի հետ: Բանեստեղծական ի՞նչ հնարանք է օգտագործել: Գրի՛ր 3 քառատող և մեկնաբանի՛ր:

4.Ինքդ զրուցի՛ր հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշ լեռան հետ(արձակ կամ չափածո): (Մեկ էջի սահմաններում):

Հանձնաժողովի նախագահ՝ /Ս.Աբազյան/